ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԹՈՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Արզնու խճուղի 10, հեռ. (0222)-2-00-11, էլ. փոստ՝ info@pulmonology.am

«27» հունիս 2024 թվական

N 342

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԿԱՐՄԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) 24 հունիսի 2024 թվականին թիվ Ե/1521-24 գրությամբ դիմել է ՀՀ ԱՆ Թոքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ հայտնելով հետևյալը"

«Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով Ծառայությունն իրականացրել է Կենտրոնի կարիքների համար գնումների պաշտոնական տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակված «միջնորմների և պատուհանների տեղադրման» աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԹԱԿ-ԳՀԱՇՁԲ-24/35» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերլուծություն, որի արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի մայիսի 6-ին Տեղեկագրում հրապարակված Ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության և կից նյութի համաձայն (Փ1)՝ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած ընկերություններից մեկը «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն է հանդիսանում Սամվել Աշոտի Զաքարյանը (Փ2):

Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Զաքարյան Շին» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 01329251) 2023 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 2025 թվականի սեպտեմբերի 8-ը ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ծառայության կողմից մատնանշվել է նաև այն փաստը, որ Ընկերության տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանի և «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության միջև առկա է

փոխկապակցվածություն, մասնավորապես Ընկերության տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանը 2022 թվականի հոկտեմբերի 14-ից մինչ օրս հանդիսանում է նաև «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր և տնօրեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձիք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում...:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

(.....)

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, **գործադիր տնօրեն**, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ

(.....):

Ընդ որում՝ Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող (...), ապա այդ հանգամանքը

համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Համադրելով Ծառայության գրությամբ ներկայացված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ արձանագրում ենք, որ «ԹԱԿ-ԳՀԱՇՁԲ-24/35» ծածկագրով

գնանշման հարցման շրջանակներում Ընկերության հայտով ներկայացված հավաստումն առ այն, որ «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերության և իրեն փոխկապակցված անձիք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության տնօրեն Սամվել Աշոտի Զաքարյանը 2022 թվականի հոկտեմբերի 14-ից մինչ օրս հանդիսանում է նաև Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության 100 տոկոս բաժնեմասի բաժնետեր և տնօրեն՝ փաստացի համալրելով վերջինիս հետ փոխկապակցված անձ: Նշված հանգամանքը ինքնաբերաբար հանգեցնում է Ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում: Հետևաբար, Ընկերությունը՝ գնման գործընթացի շրջանակներում ներկայացնելով իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն՝ խախտել իր իսկ հայտով ստանձնած պարտավորությունը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ առկա է «Կարմա Գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ Ընկերությանը ներառել նշված ցուցակում:

ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ԼՈՒՍԻՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Արթուր Աբգարյան
ԹԱԿ ՓԲԸ գնումների մասնագետ
Հեռ.՝ 091 82 65 56